

**«ԿԱՆԹԵՂ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐԴՈՒԹՅՈՒՆ**



*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ  
ԴԱՍԸՆԹԱՑ*

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

Թեմա՝ Լեզվի և մշակույթի հավասարապես ուսուցման  
կարևորությունը անգլերեն լեզվում

ՀՀ Լոռու մարզի Քարաձորի հիմնական դպրոցի  
ուսուցիչ՝ Լուսինե Ղուկասյան

2023թ

## Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ԼԵԶԿԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՎԱՍԱՐԱՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ.....	6
1.1 Լեզու և մշակույթ: Դրանց ուսուցումը.....	6
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	17
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	19

## Ներածություն

Իմ հետազոտական աշխատանքի թեման է լեզվի և մշակույթի հավասարապես կարևորությունը:

Արդիականությունը: Ժամանակակից աշխարհում լեզուն ծառայում է որպես հաղորդակցման միջոց ժողովուրդների և ազգերի միջև: Լեզուն մտքերի, հույզերի, գաղափարների, զգացմունքներն արտահայտելու ամբողջություն է, որն օգտագործում ենք մարդկանց հետ շփվելու, օգտակար տեղեկություններ ստանալու և զարգացնելու համար: Մշակույթը վերաբերում է սերնդեսերունդ փոխանցվող սոցիալական խմբի նյութական և հոգևոր բարիքներին՝ անհատական և խմբային գործելակերպն ուղղորդելու համար: Լեզուն՝ որպես մշակույթի առանձնահատուկ, արժեքավոր, հիմնարար մաս, հանդիսանում է մշակույթի կրողը և մեծ դեր է ստանձնում այդ մշակույթի արտահայտման գործընթացն իրականացնելիս: Յուրաքանչյուր մշակույթ բաղկացած է մի շարք հիմնական տարրերից, որտեղ ամենակարևորը ճանաչողական տարրերն են, հավատալիքները, արժեքները, կանոնները և պատժամիջոցները՝ որպես դրանց չիրագործման հետևանքներ, նշանների և խորհրդանիշների համակարգը: Այս բոլոր տարրերի ուսումնասիրությունն իր կարևորությունն ունի օտար լեզուներ սովորելիս, քանի որ յուրաքանչյուր մշակույթի հետ առնչվելիս մարդը բախվում է այս տարրերի ամբողջության հետ և լեզուն հանդիսանում է այդ տարրերի իրագործման և հաղորդակցման իրականացման անմիջական կրողը: Հոգվածում ներկայացվում է լեզվի և մշակույթի ունեցած հավասարապես կարևոր դերի մասին, միջմշակութային հաղորդակցման գործընթացում այս երկու կարևոր տարրերի սերտ փոխհարաբերություններին և համագործակցությանը:

Եթե կա անհատ, ապա գոյությունն ունի լեզու, եթե կա լեզու, ապա գոյություն ունի մշակույթ՝ լեզվամշակույթ, որը լեզվի և մշակույթի փոխհարաբերությունն ու փոխկապակցվածությունն է: Այս բոլորը բխում են մեկը մյուսից և մենք չենք կարող տարանջատել դրանք միմյանցից:

Միանգամայն ակնհայտ է, որ համընդհանուր համաաշխարհայնացումը կարևորում է տարբեր երկրների և ազգերի մշակույթների իմացությունը, քանի որ օտարի լեզվի և մշակույթի փոխկապակցումը հնարավոր է դարձնում ապահովել միջմշակութային հաղորդակցման արդյունավետությունը: Այն նպաստում է նաև հումանիտար գիտությունների զարգացմանը: Վերջին ժամանակներում հիմնականում ընդունված գաղափար է դարձել այն, որ միջմշակութային հաղորդակցման մեջ

միմյանց չհասկանալու հիմնական պատճառը ոչ միայն լեզվի չիմացությունն է, այլև հաղորդակցվողների ազգային գիտակցության տարբերությունը: Յուրաքանչյուր ազգի աշխարհընկալման հիմքում ընկած են սեփական համակարգի սոցիալական կարծրատիպերի ենթակա արժեքները, հետևաբար՝ մարդկային միտքը միշտ որոշվում է ոչ թե անհատի, այլ ընդհանուր մտածելակերպով:

Մարդ անհատն ունի որոշակի հարցերի շուրջ սեփական մտքերը, գաղափարները, սկզբունքները, վերաբերմունքն ու դիրքորոշումը, արժեքները, հավատալիքները և այլն և ամենապարզ իրավիճակներում իսկ այս ամենի մասին արտահայտվում է լեզվի միջոցով: Խնդիրն ավելի է արդիական դառնում և բարդանում, երբ այս հիմնահարցերը տեղափոխվում են միջազգային հաղորդակցման հարթակի վրա: Այս առումով առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում օտար լեզուների, մասնավորապես, անգլերեն լեզվի ուսուցումը հանրակրթական դպրոցներում: Սովորելով օտար լեզուն՝ մասնավորապես, անգլերեն լեզուն, որն ամբողջ աշխարհում համարվում է միջազգային լեզու, մարդը հնարավորություն է ստանում ուսումնասիրելու լեզվակիր երկրի կամ երկրների մշակույթը, ծանոթանալու նրա լեզվին իր ամբողջ քերականական, խոսքային, բարբառային, նշանային և այլ համակարգերին, արժեհամակարգին, մտքին ու դավանանքին, կարողանում է արժևորել սեփական լեզուն, լեզվամշակույթը, հավատալիքներն ու գաղափարները՝ համեմտական տանելով օտար լեզվի և մշակույթի հետ: Լեզվի զարգացման պատմությունը հարուստ է և բազմազան: Այն լցված է այլ լեզուներից փոխառումներով, ֆիքսված արտահայտություններով, առասպելներով, անսովոր փոխաբերություններով, ժարգոնով: Մայրենի լեզուն յուրաքանչյուր ազգի սեփականությունն է, քանի որ դրանում են թաքնված պատմությունները, անցյալը, բոլոր հաղթանակներն ու պարտությունները, ժողովրդի ինքնին զարգացումը: Նրա օգնությամբ մենք շփվում ենք միմյանց հետ, փոխանակվում փորձով, գիտելիքներով: Ոչ մի ժողովուրդ ի վիճակի չէ ապրել առանց խոսքի, քանի որ հենց հաղորդակցությունն է նպաստում նրա զարգացմանը: Նույնը վերաբերում է օտար լեզուներին, նրանց մշակութային համակարգին: Օրինակ՝ դասարանում տարբեր մեթոդական հնարների միջոցով ուսումնասիրելով անգլիական տոներն ու ավանդույթները՝ երեխաները ծանոթանում են օտար մշակույթի հետ և հետաքրքիր տեղեկություններ և գաղափարներ բացահայտում: Այլ կերպ ասած՝ հենց մշակույթն է՝ ավանդույթները, սովորությունները, որ ձևավորում և պայմանավորում է ոչ միայն մեր մտածական , այլև՝ խոսքային առանձնահատկությունները: Հետևաբար, որևէ լեզվով հաղորդակցվելը նշանակում է հավասարապես առնչվել այդ լեզվի մշակույթին, քանի

որ չենք կարողանա սովորել լեզու՝ չհասկանալով տվյալ երկրի մշակույթը: Այսպիսով, օտար լեզվի ուսուցման նպատակներից մեկը աշակերտների միջև միջմշակութային իրավասության ձևավորումն է, որը ենթադրում է երկու մշակույթների, այն է՝ մայրենի և օտար, համեմատելու ունակության յուրացում: Տարբեր ազգերի ներկայացուցիչների հաղորդակցման ընթացքում անհրաժեշտություն է առաջանում որոնելու լեզվի և մշակույթի հիմնախնդրի նոր մոտեցումներ, ինչի մասին և կներկայացվի այս հետազոտական աշխատանքում:

# ԳԼՈՒԽ 1. ԼԵԶՎԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՎԱՍԱՐԱՊԵՏ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

## 1.1 Լեզու և մշակույթ, դրանց ուսուցումը

Ամեն օր, շփվելով այլ մարդկանց հետ, կիսվում ենք մտքերով, զգացմունքներով և իրադարձություններով, որոնք տեղի են ունեցել մեր կյանքում: Ամբողջ օրը գրեթե անընդմեջ բառեր ենք օգտագործում՝ հազվադեպ մտածելով լեզվի դերի մասին մեր կյանքում: Լեզուն այլ մարդկանց հետ շփվելու օգնական է, և դա, անշուշտ, պետք է գնահատել: Երբեմն կոպիտ խոսքը վիրավորում է մարդուն, իսկ բարի խոսքը նրան ավելի է ուժեղ դարձնում: Ուստի չպետք է մոռանալ խոսքի ծանրության, մարդկանց վրա դրա ազդեցության մասին: Բառապաշարի հարստացմամբ զարգանում է մեր ուղեղը, լեզվի օգնությամբ սովորում ենք տրամաբանել, վիճել, վերլուծել: Լեզուն մեզ ընձեռնում է մտածելու կարողություն, ինչով և մենք տարբերվում ենք բնազդներով գործող կենդանիներից: Ինչպես Վ. Ֆոն Հումբոլդտն էր գտնում «լեզուն միտք ստեղծող միակ օրգանն է»:

Լեզուն մարդու ճանաչողական գործունեության միջոցներից է: Պատմամշակութային պայմանավորվածություն ունենալով՝ այն հնարավորություն է ստեղծում հասարակական նշանակություն ունեցող այնպիսի մտավոր կադապարներ ձևավորելու համար, որոնց կիրառմամբ հնարավոր է դառնում այլ մարդկանց ու սեփական գործունեության ղեկավարումը: Լեզուն արտացոլում է այն մարդկանց մշակույթը, ովքեր օգտագործում են այն: Մարդը միակն է, ով մշակութային արժեքները փոխանցում է սերնդեսերունդ՝ այն պահելով ակտիվ և դինամիկ, որպեսզի ժամանակի ընթացքում պահպանի այն: Հասարակությունը անհատների կազմակերպություն է, իսկ մշակույթը նրա վարվելակերպը: Հասարակությունը այն մարդկանց ամբողջությունն է, ովքեր ապրում են որոշակի վայրում՝ լինի դա քաղաք, թե երկիր: Մյուս կողմից, մշակույթը մտածելակերպի, վարքի ձև է, երաժշտություն, ավանդույթներ, սովորույթներ, հասարակության մաս կազմող, բնակչություն կազմող այլ ասպեկտ: Լեզուն հանդիսանում է մտքի ձևավորման միջոց. ճանաչողական կառույցները, ինչպես և լեզվականները, նույնպես ձևավորված են:<sup>1</sup> Լեզուն, մշակույթն ու հասարակությունը հազիվ թե կարելի է տարանջատել, քանզի անհնար է հասկանալ մարդկային հասարակությունը առանց մարդկային մշակույթը հասկանալու: Լեզվամշակույթը հիմնված է լեզու-մշակույթ-մարդկային անհատականություն եռյակի

<sup>1</sup> В. Касевич, 1989, 8

վրա: Հասարակությունը, լինելով լեզվի կրողը, արտահայտում է տարբեր մշակույթների նրբությունները, նմանություններն ու հակադրությունները: Լեզվական պատմեշը միանգամայն ակնհայտ է, բայց այն ակնհայտ է դառնում միայն բախման կամ զուգադրման դեպքում:

Ներկայումս մենք ապրում ենք այնպիսի մի աշխարհում, որը տանում է դեպի գլոբալիզացիա, որտեղ բոլորս միմյանց հետ կապի մեջ ենք գտնվում: Գլոբալացումը մարդկության զարգացման մշտական ուղեկիցն է տարբեր դրսևորումներով: Անկախ գլոբալացմանը տրվող գնահատականներից, այսօր նկատելիորեն մեծացել է միջպետական, միջմշակութային առնչությունների տիրույթը: Սա նշանակում է, որ մարդն ավելի հաճախակի է հայտնվում նոր միջավայրում, ինչն էլ արտահայտում է սոցիալական այնպիսի հմտություններ, ինչպիսիք են հաղորդակցումը, համագործակցելու, նոր իրավիճակներում կողմնորոշվելու հմտությունները: Եվ այս է պատճառը, որ լեզուներ սովորելը հիանալի գործիք է հաղորդակցման և մասնագիտական առաջընթացի համար: Լեզու սովորելով՝ զարգանում են լեզվական հմտություններն ու մտածողությունը, որը օգտագործվում է մարդկային զարգացման գրեթե բոլոր ոլորտներում, ընդլայնվում է աշխատանք գտնելու ու միջազգային ծրագրերին մասնակցելու հնարավորությունները, լեզվակրի հետ շփումն ու լեզվամշակույթն ուսումնասիրելը: Իմանալով մեկ լեզու՝ կարողանում ես սովորել և հասկանալ մեկ այլ լեզու:

Հասարակության վիճակը ազդում է լեզվի վիճակի վրա, իսկ լեզվի վիճակը՝ հասարակության վիճակի վրա: Հասարակության և լեզվի փոխադարձ ազդեցությունը նման է մարդու և նրա լեզվի փոխադարձ ազդեցությանը: Որքան խելացի է մարդը, որքան հարուստ է նրա լեզուն, այնքան լավ է խոսում և զգում: Մարդը որքան խորն ու լիարժեք ուսումնասիրում է իր լեզուն, այնքան ավելի խելացի և իմաստուն է դառնում: Լեզուն պահապանն է հավերժական մտքի և իմաստության, որը Տերը դրել է դրանում և սերունդների հետագա կյանքում: Միշտ ավելի հեշտ և բնական է թափանցել քո լեզվի խորքերը, քան թափանցել օտար լեզվի նրբությունները: Հասարակությունը չի ապրում առանց գաղափարների, օրենքների ու սկզբունքների, իսկ նրանք իրենց հերթին՝ առանց լեզվի: Հիմնական գաղափարների, սկզբունքների, նրանց և աշխարհի միջև կապերի ամբողջությունն արդեն փիլիսոփայություն է: Գաղափարների և սկզբունքների այս հավաքածուն մշտապես պարունակվում են լեզվում: Յուրաքանչյուր լեզու պարունակում է որոշակի ժողովրդի կյանքի փիլիսոփայությունը<sup>2</sup>:

<sup>2</sup>Լեզուն և նրա դերը հասարակության կյանքում: Գալուշկին Օ. Յու

Յուրաքանչյուր երկիր, ազգ ունի իրեն բնորոշ հավատալիքներն ու արժեքները, որոնք միասին ձևավորում են տվյալ երկրի մշակույթը: Լեզուն հանդիսանում է այս մշակույթի արտահայտման միջոց: Հավատները կամ գաղափարախոսություններն այն մտքերն են, որոնք հասարակությունը համարում է ուժի մեջ: Արժեքներն այդ համայնքի անդամների կողմից ընդունվում են որպես ինտեգրման և միության մշակութային տարր: Դրանք մի շարք տարրեր են, որոնց ամբողջ հասարակությունը կառչում և պաշտպանում է՝ շնորհիվ իրենց մեծ մշակութային հարստության: Այն հասարակության և մշակույթի միջև հարաբերությունների ընդհանուր տարր է՝ ծառայելով որպես այլոց գործողությունների գնահատման չափանիշ: Մշակույթը, կարևոր ազդեցություն ունի անհատի այնպիսի կողմերի վրա, ինչպիսիք են գաղափարախոսությունն ու կրոնը: Այս ազդեցությունն իր հերթին արտահայտվում է սոցիալական փոխհարաբերություններում, որն ավարտվում է հենց հասարակությունների ներկայի և ապագայի որոշմամբ: Արևմտյան մշակույթում այս երևույթի օրինակ է ծնողների կողմից երեխային չափազանց մեծ օգնությունը:

Մշակույթն ու լեզուն անբաժանելի են, քանի որ մշակույթով է պայմանավորված, թե ով է հաղորդակցվում ում հետ, թե որն է հաղորդակցման նյութը, և թե ինչպիսի ընթացք է ունենում այդ գործընթացը: Այս պարագայում անչափ կարևոր է հաշվի առնել մշակութային իրազեկության գործոնը՝ լեզվակրի մշակույթին ծանոթացումը: Ըստ մարդաբանների՝ մշակույթը մարդկանց մի խմբի կենսակերպն է, որն իր մեջ ընդգրկում է հասարակական գործունեություն: Այն կապում է մի խումբ մարդկանց միմյանց և միաժամանակ տարբերակում է նրանց մյուսներից<sup>3</sup>:

Ֆրանկը կարծում էր, որ, մշակույթ բառը օգտագործելով, անշուշտ նկատի է առնվում գրականություն, երաժշտություն և արվեստի մյուս տեսակների ամբողջությունը: Սակայն մշակույթի զգալի մասն են կազմում նաև յուրաքանչյուր ժողովրդի սովորույթները, տոները, տարազները, ճարտարապետությունը, ինչպես նաև այդ ժողովրդի համար էական արժեհամակարգը, որևէ հարցի շուրջ յուրօրինակ մոտեցումներն ու վերաբերմունքը:

Անգլերենի մասնագետների համար անչափ կարևոր և պատասխանատու հարց է հասկանալ, թե ինչպես կարելի է անգլախոս երկրների մշակույթի մասին ունեցած մեր գիտելիքներն ու պատկերացումները օգտագործել անգլերեն լեզու դասավանդելիս<sup>4</sup>:

<sup>3</sup> Montgomery and Raid - Thomas, 1994: 5/

<sup>4</sup> Frank, 2013: 2



Կրամշի կարծիքով ուսուցչի պարտականությունն է սովորողներին սովորեցնել հասկանալ, թե ինչու են տվյալ լեզուն կրողները խոսում հենց այդ ձևով, և թե ինչու են նրանք լռում<sup>5</sup>: Այսինքն կարևոր է հասկանալ նախ և առաջ տվյալ երկրի լեզվամտածողությունն ու լեզվի կիրառման մշակույթը:

Սովորողի, ուսանողի մոտ տվյալ երկրի մշակույթի, սովորույթների հանդեպ մեծ հետաքրքրություն առաջացնելու նպատակով անհրաժեշտ է, որ մասնագետները զինված լինեն բազմակողմանի, խորը գիտելիքներով, ուստի միայն բառապաշար, քերականություն և արտասանություն իմանալը բավարար չէ:

Օրինակ՝ մեծ հետաքրքրություն առաջացնելուն մեծապես օգնում են ազգային տոների մասին դասերը:

Halloween կոչվող տոնը, որը նշվում է յուրաքանչյուր տարի հոկտեմբերի 31-ին, մեծ ուրախություն և խանդավառություն է առաջացնում սովորողների շրջանում, երբ սովորողներին տրվում է հանձնարարություն տեղեկություն հավաքել և հանդես գալ զեկույցներով:

Thanksgiving Day (Գոհունակության տոնը) նշելիս սովորողները առիթ են ունենում ծանոթանալու այդ տոնի ծագմանը, համեմատում են բարեկենդանի տոնի հետ: Նրանց տրվում է առաջադրանք գտնելու նմանություններ, տարբերություններ, ընդհանրություններ, որի ընթացքում հետաքրքրությամբ պեղում են համացանցի տարբեր կայքերում, երբեմն նաև գրքերում՝ փորձելով գտնել որքան հնարավոր է շատ ու հետաքրքիր տեղեկություն ու փաստեր: Այդպիսով սովորողը ուսումնասիրում է ոչ միայն տվյալ երկրի մշակույթի մաս կազմող տեղեկատվությունը, այլև ձեռք է բերում բառապաշար, զեկույցներ ներկայացնելիս պարզում է արտասանության, քերականության կիրառման նրբությունները, որոնք բնորոշ են տվյալ լեզվամշակույթին:

Սովորողներն անհամբերությամբ են սպասում նաև Սուրբ Ծննդյան տոնին նվիրված դասերին, որոնց ընթացքում հնարավորություն են ունենում ծանոթանալու Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի տոնին առնչվող ավանդույթներին, պատմություններին, սովորում են երգեր, բանաստեղծություններ:

Այսպիսով՝ մշակութային իրազեկությունը կարևոր է, որպեսզի մարդիկ հասկանան, թե ինչու մի երկրում կարելի է այս կամ այն բանն անել, իսկ մըուսում՝ ոչ, թե ինչու մի երկրում առաջնային են համարվում որոշ հատկանիշներ, իսկ մյուսում՝ ոչ:

<sup>5</sup> Kramsch, 1993: 245

Օրինակ՝ հայերիս համար առաջնային են համարվում հավատարմությունը, հյուրասիրությունը, առատաձեռնությունը, մեծերի հանդեպ հարգանքը, մինչդեռ, օրինակ, ամերիկացիները հակված են գնահատելու անկախությունը, ինքնավստահությունը, հավասարությունը և այլն: Լեզու սովորելիս, մասնավորապես անգլերեն լեզու, սովորողները պետք է իմանան, թե ինչ անհարմար իրավիճակներում կարող են հայտնվել նրանք օտար երկիր ճանապարհորդելիս: Մեր հայրենակիցները բազմիցս մշակութային ցնցում են ապրել, երբ, օրինակ, օտար երկրներում նկատել են, որ ամեն ոք վճարում է իր համար, կամ 1-2 րոպե ուշանալու համար խիստ նկատողություն է ստանում վերադասից:

Օտար լեզու ուսումնասիրելիս, սովորելիս առանձնահատուկ կարևորություն ունի գեղարվեստական գրականությունը լեզվամշակույթը վեր հանելու նպատակով: Ծանոթանալով անգլիական, ամերիկյան գրականությանը՝ սովորողները մոտենում են տվյալ մշակույթին՝ ուսումնասիրելով այդ երկրների ավանդույթները, համոզմունքները, արժեքները, հավատալիքները, որոնք զուգորդվում են հեղինակների կողմից ներկայացված լեզվական ոճերի, քերականական նրբությունների, բարբառների, բառապաշարի կիրառման բազմազանությամբ: Համեմատական է տարվում տարբեր ժամանակաշրջաններում կիրառված լեզվական հնարների, մտածելակերպի, արժեքների, դիրքորոշման միջև:

Լեզվական միավորները կրում են լրացուցիչ իմաստային երանգներ, որոնք բառային նշանակություններից զատ արտահայտում են այլ իրողություններ, այսինքն բառիմաստն ավելի խորը, ընդարձակ ու համապարփակ հասկացություն է: Նախ և առաջ նկատի ունենք լեզվական միավորների՝ որոշակի սոցիալական խմբի մշակութային որակներին բնորոշ իմաստային երանգները: Որևէ լեզվով հաղորդակցվելը նշանակում է հավասարաբար առնչվել այդ լեզվի մշակույթին: Մենք չենք կարողանա սովորել լեզու առանց հասկանալու տվյալ լեզվի մշակույթը, քանզի լեզուն և մշակույթը սերտորեն կապված են միմյանց, ավելին, կարելի է ասել, որ դրանք սերտաձած են: Այսպիսով, լեզուն այբուբենից, բառապաշարից, քերականական կանոններից զատ, նաև մշակույթ է: Ոչ ոք չի հերքում, որ լեզուն ու մշակույթը փոխկապակցված են: Այնուամենայնիվ, ավելի ճշգրիտ կլիներ ասել, որ մշակութային փոփոխություններն են բերում լեզվի և մտածողության փոփոխությունների: Տվյալ լեզվով հաղորդակցվողներն օգտագործում են լեզվական որոշակի միավորներ, որոնք արտահայտում են տվյալ մշակույթին բնորոշ փորձն ու ընկալումները: Այդպիսի միավորները կարող են համարվել տվյալ մշակույթը կրողների լեզվական գիտակցության և ընկալման մեջ արմատավորված ծածկագրեր: Հենվելով որոշակի

ուսումնասիրությունների վրա՝ Ուորֆը<sup>6</sup> պնդում էր, որ, օրինակ, հոպի լեզվով խոսացողներն ու անգլերեն լեզվով խոսացողները աշխարհն ընկալում են տարբեր տեսանկյուններից , քանի որ նրանց լեզուները տարբեր են: Ակնհայտորեն հնարավոր չէ միանշանակ պատասխան տալ այն հարցին, թե արդյոք լեզուն է ազդում մշակույթի վրա, թե՞ մշակույթը՝ լեզվի, արդյոք

Մշակույթը մոտեցումների, համոզմունքների, վարքագծային պայմանականությունների, հիմնական մտածելակերպի և արժեքների խճճված հավաքածու է, որն ազդում է ոչ միայն տվյալ խմբի յուրաքանչյուր անդամի վարքագծի վրա, այլև այն բանի վրա, թե ինչպես է այդ անդամը մեկնաբանում այլ մարդկանց կամ այլ մշակույթներին պատկանող ներկայացուցիչների վարքագիծը: Մշակույթը նաև գոյություն ունեցող երևույթների/օբյեկտների նկատմամբ վերաբերմունքի արտահայտման միջոց է: Օբյեկտներին տրվում են համապատասխան անուններ, որոնք բնորոշ են տվյալ մշակույթին: Օրինակ, ինչպես նշում է Բիրանը<sup>7</sup> a loaf of bread արտահայտությունը բրիտանացիների մոտ արթնացնում է այնպիսի զգացողություններ, որոնք, առանց մշակութային հենքը ըմբռնելու, չեն կարող ընկալվել հայ լեզվամշակութակրի կողմից: Բանն այն է, որ նշված արտահայտությունը երբ բառացի թարգմանվի հայերեն կստացվի մեկ բոքոն հաց, որը ընդհանրապես համարժեք չի լինի տվյալ արտահայտությանը: Այսպիսով, մենք կարող ենք եզրակացնել, որ լեզուն մշակույթի մի մասն է, և դրա միջոցով մենք արտահայտում ենք մեր սեփական մշակութային համոզմունքներն ու արժեքները, և որ օտար բառի կամ բառիմաստի ճիշտ ընկալումն ու կիրառումը կապված է ոչ միայն օտար լեզվի բառապաշարի, այլև մշակույթի իմացության հետ: Ռուս մշակույթի կրողները, օրինակ, կապույտի երանգները պատկերելու համար ավելի շատ բառեր են կիրառում (голубой, синий, лазурный, васильковый) հետևաբար տեսողականորեն ավելի լավ են տարբերում կապույտի երանգները, քան հայ մշակույթի կրողները: Որոշ ազգային խմբեր կիրառում են ոչ թե աջ և ձախ, այլ հյուսիս, հարավ, արևելք և արեւմուտք բառային միավորները, և արդյունքում նրանք աչքի են ընկնում տարածական կողմնորոշման ավելի մեծ ունակություններով, քան միայն աջի և ձախի բառակիրները: Իսպանախոսներն ու ճապոնախոսները չեն կարողացել հիշել գործողություն կատարող սուբյեկտին այնքան լավ, որքան անգլիացիները, քանի որ իսպաներենում և ճապոներենում, պատճառահետևանքային կապերը շատ ավելի թույլ են արտահայտվում և կրավորական ավելի լայն կիրառություն ունի, քան անգլերենում:

<sup>6</sup> Ուորֆ Բ. Լ. 1956 լեզուն, միտքը և իրականությունը: The M.I.T. Մամուլ, Massachusetts

<sup>7</sup> Byran, M and Sarries, V.E. 1989 Investigating Cultural Studies in Foreign Language Teaching

Օրինակ, իսպաներեն և ճապոներեն լեզվակիրները նախընտրում են գործածել Ծաղկամանը կոտրվեց ասույթը, այլ ոչ թե դրա Ջոնը կոտրեց ծաղկամանը տարբերակը (<<https://www.languagemagazine.com>>): Ասվածից հետևում է, որ լեզվի ուսուցումը սերտորեն կապված է ոչ թե լեզվի, այլ լեզու-մշակույթի ուսուցման հետ: Մշակույթի ուսուցումը, ըստ էության, կարևոր դեր է կատարում օտար լեզվի ուսուցման գործընթացում, ավելին, այն դրա անբաժանելի տարրն է: Եվրոպական մշակութային հիմնադրամի Բելաջիո հռչակագիրը և Կրթական զարգացման միջազգային խորհուրդը պնդում են, որ միջազգային արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է ոչ միայն լեզվական իմացություն, այլև հենքային գիտելիքներ լեզվակիր երկրների և նրանց մշակույթների մասին (<<https://talloiresnetwork.tufts.edu>>):

Լեզուն հասարակության մտքի և վարքագծի արդյունք է: Օտար լեզվով հաղորդակցվող անհատի խոսքի արդյունավետությունը անմիջականորեն կապված է այդ լեզվի մշակույթի հետ<sup>8</sup>: Մշակույթն ու սոցիալական փոփոխությունները առաջացնում են լեզվական նոր ձևեր: Բառապաշարը լեզվի այն մասն է, որը ամենահաճախն ու արագն է փոփոխվում: Նոր բառեր և բառակապակցություններ են հայտնվում և տարածում գտնում, եթե դրանց կարիքն առաջանում է: Այնուամենայնիվ, թե՛ լեզվում, թե՛ մշակույթում լիարժեք մեկուսացումներ չկան: Դիֆուզիան, փոխառությունը, նվաճումը և համախմբումը շարունակական գործընթացներ են: Համաշխարհային համակարգում լեզվական և մշակութային տարրերն անցնում են խմբից խումբ: Լեզուների և մշակույթների շփումը առաջացնում է բառապաշարային շարահյուսական լեզվական փոփոխություններ:

Մշակութային առանձնահատկությունները կարող են փոխկապակցվել լեզվընտանիքների տեղակայման հետ: Էթնիկ խմբերը, որոնք խոսում են միևնույն լեզվընտանիքին պատկանող լեզուներով, կարող են ավելի շատ մշակութայնորեն նմանվել միմյանց, քան այն խմբերը, որոնք խոսում են տարբեր լեզվական համակարգ ունեցող լեզուներով: Նույնիսկ եթե կան խմբեր, որոնց անդամները խոսում են ոչ միևնույն լեզվընտանիքին պատկանող լեզուներով, կարող են կապեր հաստատել կոնկրետ ոլորտներում (ռազմավարություն, առևտուր, խառնամուսնություններ): Նոր գաղափարներն ու լեզվական միավորները լայնորեն տարածվում են տվյալ խմբին պատկանող լեզուներում: Օրինակ, անգլերենի բառապաշարի շատ միավորներ գալիս են ֆրանսերենից: Լեզվական այդպիսի փոխառությունները նախ և առաջ արտացոլում են ֆրանսիական մշակույթը; Հաշվի առնելով, թե ինչ բառեր են փոխառվել, մենք կա-

<sup>8</sup> Taylor 1979

րող ենք հետևություններ անել այն մասին, թե ինչպիսին է եղել հաղորդակցության բնույթը: Այսպիսով, լեզուներում գրեթե միշտ առկա են մշակույթների բախումներից առաջացած հետքեր:

Փորձելով հասկանալ, թե ինչպես է մշակույթն առաջացնում լեզվական բազմազանություն լեզուներում, նախ նշենք, որ ստանդարտ լեզու հասկացությունը վերաբերում է այն լեզվին, որը դոմինանտ է և ընդհանուր առմամբ ընդունվում է որպես պատշաճ խոսքածև: Ստանդարտ լեզուն բացառում է urban slang-ը և սխալ քերականական կանոնների օգտագործումը, թեև վերջիններս գոյություն ունեն լեզվում: Նաև բարբառները, որոնք նույն լեզվում ունեն ընդունված ստանդարտից տարբեր արտասանություն, քերականություն և բառապաշար: Նույն լեզուն, օրինակ անգլերենը, կարող է ունենալ իր այլ ստանդարտ տարբերակը, օրինակ ամերիկյան անգլերենը, որը տարբերվում է բրիտանական անգլերենից (բառապաշարային, արտասանական, քերականական տարբերություններ): Ակցենտը վերաբերում է միայն հնչյունաբանական տարբերություններին: Հիմնականում ակցենտը առաջ է գալիս այն ժամանակ, երբ խոսողները տարբեր կերպ են հնչում միևնույն լեզվով խոսելիս: Հետևաբար, միևնույն լեզվով խոսողների մշակույթները կարող են տարբեր լինել նաև տարբեր ակցենտների պատճառով: Ամերիկայի Միացյալ Նահանգներում մենք ունենք ինը տարբեր մշակութային շրջաններ, որոնք ունեն անգլերենի ստանդարտ լեզվի տարբեր ակցենտներ: Այս տարածաշրջաններից յուրաքանչյուրը ժամանակի ընթացքում զարգացել է՝ հիմնվելով մշակույթի վրա:

Միացյալ Նահանգների կամ Արևմտյան Եվրոպայի մշակույթները արժևորում են խոսքային հաղորդակցության ինքնադրսևորումը: Ամերիկացիները խրախուսում են ուղղախոսությունը, այսինքն գերադասում են ասել այն, ինչ մտածում են տվյալ հարցի վերաբերյալ: Մյուս կողմից, ասիական մշակույթները օգտագործում են անուղղակի հաղորդակցական ոճ: Թեև անգլերենում նույնպես բառերը, ինչպիսիք են օրինակ maybe, perhaps եղանակավորող միավորները, ավելի հաճախ են օգտագործվում, քան yes, no կամ sure հաստատող միավորները: Հայկական մշակույթում մարդիկ նախընտրում են տողատակերով խոսել, և չնայած մեր խոսքը բավականին համեմված է դարձվածքներով, քարացած արտահայտություններով, ինչպես նաև բարբառներից վերցրած բառակապակցություններով, մենք, միևնույնն է, ավելի հեշտ ենք միմյանց հասկանում նույնիսկ առանց բառերի:

Թեև անգլերենում օգտագործվել են ֆորմալ thou, thee և ոչ ֆորմալ you դերանունները, այսօր օգտագործվում է միայն you դերանունը և՛ եզակի ոչ ֆորմալ իմաստով, և՛ հոգնակի ֆորմալ իմաստով: Այլ լեզուներում, օրինակ գերմաներենում,

հայերենում, ֆրանսերենում պահպանվում են սոցիալական նորմերին ու կանոններին համապատասխանող եզակի ոչ ֆորմալ և հոգնակի ֆորմալ տարբեր ձևեր: Լեզվական այսպիսի տարբերությունները բխում են մշակույթից. Ամերիկացիներն ու անգլիացիները ավելի անմիջական և անկաշկանդ միջավայրում են ապրում քան գերմանացիները, հայերն ու ֆրանսիացիները, ուստի ավելի ազատ են դիմելիս:

Լեզվի և մշակույթի միջև փոխհարաբերությունը միանշանակապես սիմբիոտիկ է, քանի որ մեկն առանց մյուսի չի կարող իրացնել բնորոշ գործառնությունները: Մարդիկ ծնվում են առանց լեզվի իմացության, սակայն լեզվի ձեռքբերման ունակությամբ, որը հնարավորություն է տալիս սովորել մեկից ավելի տարբեր լեզուներ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մարդիկ իրենց մայրենի լեզուն ավելի շուտ սովորում են մշակութային հաղորդակցման, քան ֆորմալ ուսուցման միջոցով: Աշխարհում կա մոտավորապես 6000 լեզու, և դրանցով հաղորդակցվում են 9000 տարբեր մշակույթներ: Որոշ լեզվաբաններ մտահոգություն են հայտնում, որ աշխարհում ամենից քիչ օգտագործվող լեզուների 5 տոկոսին սպառնում է ոչնչացում, և առաջիկա 100 տարիների ընթացքում աշխարհի բոլոր լեզուների 90 տոկոսը կամ արդեն մեռնելու պրոցեսում կգտնվեն կամ արդեն մեռած կլինեն: Ի վերջո, մի ամբողջ մտածողության ձև, մշակույթ կվերանա, եթե գոյություն չունենա տվյալ լեզուն:

Լեզուն, որպես մշակույթի տարր, շատ կարևոր դեր ունի մարդու կյանքում: Այն հնարավորություն է ընձեռում մարդկանց շփվել մյուսների հետ՝ իրենց այս կամ այն կարիքների բավարարման նպատակով: Ի վերջո, պետք է նշել, որ լեզվի հիմնական գործառնությամբ այնուամենայնիվ հաղորդակցումն է: Սակայն սա ամենևին չի նշանակում, որ լեզուն միայն մեկ գործառնությամբ ունի: Լեզուն գործիք է ինքնադրսևորման, ինտեգրման, սոցիալական ադապտացիայի և կառավարման<sup>9</sup>:

Շատ լեզվաբաններ և փիլիսոփաներ դեն են լեզվական դետերմինիզմին: Նրանք պնդում են, որ լեզուն է թելադրում միտք, և չկա միտք առանց լեզվի: Ընդունված է նաև այն տեսակետը, որ լեզուն ազդում է ոչ միայն մտքի, այլև մշակույթի վրա: Հայտնի օրինակն այն է, որ էսկիմոսը ձյան համար բազմաթիվ հաշվելի գոյականներ ունի, իսկ անգլերենում, հայերենում և այլ լեզուներում միայն մեկ բառ է կիրառվում ձյան հասկացությունն արտահայտելու համար: Հետևաբար, էսկիմոյի և անգլախոսի կամ հայի աչքերով «ձյան աշխարհը», բնականաբար, տարբեր կլինի: Այս օրինակը ցույց է տալիս, որ մարդկանց ընկալումները իրենց շրջապատի մասին փոփոխվում են ըստ իրենց լեզուների հայեցակարգային կատեգորիաների<sup>10</sup>:

<sup>9</sup> Keraf 1980

Այդուհանդերձ, դեռևս վերջնական պատասխան չի գտել այն հարցը, թե ո՞ր ազդեցությունն է առաջնայինը՝ լեզվականը, թե՞ մշակույթինը, և թե արդյոք մայրենի լեզուն է պայմանավորում մարդկային տարբեր ընկալումները, թե՞ հակառակը՝ տարբեր աշխարհայացքներն ու մշակույթներն են որոշում լեզուն: Այստեղ տեղին է նշել Ուինսթոն Չերչիլի մեջբերումը. «Մենք ձևավորում ենք մեր տները, իսկ հետո մեր տները ձևավորում են մեզ»:

Մեր օրերում արագ տեմպերով զարգանում է լեզվամշակութաբանությունը, որի ուսումնասիրության առարկաներն են լեզվի և մշակույթի փոխկապակցվածությունը, զարգացումը, տարբեր միտումները և նկարագրությունները, ինչպես նաև դրանց համաժամանակյա փոխներգործությունը<sup>11</sup>: Վ. ֆոն Հունբոլդտը դեռևս XIX դարի վերջին սկիզբ դրեց լեզվամշակութաբանությանը, գիտություն, որը, առաջանալով լեզվի մարդաբանական ուսումնասիրությունների հարացույցի զարգացման արդյունքում, ամրապնդեց լեզվի և ժողովրդի հարաբերությունների փոխկապակցվածությունը<sup>12</sup>: Վ.Ի. Կարասիկն առաջարկում է դիտարկել մշակութային հասկացությունը որպես բազմակողմանի իմաստաբանական էություն, որում առանձնացվում են հասկացութային, ձևային և արժեքային կողմերը: Հասկացութային կողմը հասկացության լեզվական ամրագրումն է (ֆիքսացիա), նրա նշանակությունը, նկարագրությունը, հատկանշական կառուցվածքը, սահմանումը, տվյալ հասկացույթի զուգահրական նկարագիրը այլ տիպի հասկացությունների համեմատությամբ: Ձևային կողմն առարկաների, երևույթների, իրադարձությունների տեսողական, լսողական, շոշափելի, համային բնութագրերն են, որոնք գոյություն ունեն մեր գիտակցության մեջ: Հասկացույթի արժեքային կողմը բնութագրում է տվյալ քաղաքակրթության կարևորությունը ինչպես անհատի, այնպես էլ հասարակության համար<sup>13</sup>:

Լեզվի և մշակույթի ուսումնասիրության ասպարեզում քաղաքավարության կանոններն իրենց ուրույն դերն ունեն ներդաշնակ, արդյունավետ հաղորդակցման իրականացման մեջ: Ըստ Վ. Կերբրատ-Օրեկիոնիի՝ «քաղաքավարություն» հասկացույթը խոսույթի վերլուծության համատեքստում ունի շատ կարևոր գիտական

<sup>10</sup> Runqing 2003

<sup>11</sup> Телия В. Н. Русская фразеология. Семантический, прагматический и лингвокультурологический аспекты. Москва, 1996, 217 стр.

<sup>12</sup> Гумбольдт В. Ф. Язык и философия культуры. Москва, 1985, 377 стр

<sup>13</sup> Jucker A. History of English and English Historical Linguistics. Stuttgart, 2000.

դերակատարում, առօրյա կյանքում այն դիտարկվում է մարդկային հարաբերություններում կարևորագույն դերակատարում ունեցող երևույթ, որն ընդունակ է կատարյալ կառավարելու մարդկային փոխհարաբերությունները<sup>5</sup>: Լեզուն մշակույթի հայելին է, այն արտացոլում է ոչ միայն անհատի ապրելակերպի պայմաններն իրական աշխարհում, այլև ժողովրդի հասարակական ինքնագիտակցումը, ազգային բնավորությունը, նորմերը, քաղաքավարության կանոնները և հատկապես աշխարհընկալումը: Լինելով շրջապատող աշխարհի հայելին՝ Լեզուն արտացոլում է իրականությունը, ինչպես նաև ստեղծում աշխարհի պատկերը, որը յուրաքանչյուր լեզվում ինքնատիպ է: Այսպիսով, լեզվամշակութային հասկացույթը մտային միավոր է, որի քննության հիմնական նպատակը լեզվի, ազգային գիտակցության, մշակույթի, մասնավորապես տվյալ հետազոտության շրջանակներում քաղաքավարության նորմերի լեզվաբանական ուսումնասիրությունն է: Միջմշակութային կապերի ընդլայնման արդյունքում հաճախ հաղորդակցման մասնակից են դառնում տարբեր մշակույթների և քաղաքակրթությունների պատկանող ներկայացուցիչներ: Հետևաբար՝ սոցիալ-մշակութային նորմերի մասին անտեղյակությունը կարող է առաջացնել մշակութային շեղում մեկ այլ հասարակության մարդկանց համար և հանդիսանալ խնդրահարույց իրավիճակների պատճառ: Հաղորդակցման մեջ գտնվող մարդկանց արդյունավետ և հաջող հաղորդակցման գրավականը ոչ միայն լեզվական հմտություններն են, գիտելիքները, այլև ազգային – մշակութային բանավոր և գրավոր խոսքի նորմերի կիրառումը: Նախ՝ միջմշակութային հաղորդակցման մեջ անհրաժեշտ է հիմնվել այն փաստի վրա, որ տարբեր մշակույթների պատկանող անհատներն իրենց մշակույթի կրողներն են և կառավարում են քաղաքավարության մասին իրենց ազգային կանոններն ու ավանդույթները: Այսինքն՝ քաղաքավարի վարվելակերպի ազգային և մշակութային առանձնահատկությունների իմացությունը և իրազեկությունը հաջող հաղորդակցման անբաժանելի մասն են: Միջմշակութային հաղորդակցման մեջ քաղաքակիրթ 5 Kerbrat-Orecchioni. Le Discours-en-interaction. Paris, 2005. Քաղաքավարության լեզվամշակութաբանական ըմբռնումը 61 լինելու համար բավարար չէ ունենալ լեզվական հմտություններ, անհրաժեշտ է նաև տիրապետել այսպես կոչված «քաղաքավարության ռազմավարություններին» և կարողանալ դրանք օգտագործել հաղորդակցման մեջ: Անհատին անհրաժեշտ է իմանալ ոչ միայն տվյալ երկրի լեզուն, այլև ինչպես իրեն պահել այդ երկրում տարբեր իրավիճակներում: Այս գիտելիքները և հմտություններն անհրաժեշտ են յուրաքանչյուրին, ով պատրաստվում է շփվել օտարերկրացիների հետ և հաղորդակցվել տվյալ երկրում:



## Եզրակացություն

Այսպիսով, լեզվի միջոցով մենք ներկայացնում ենք մեր փորձն ու մշակույթը, մեր ընկալումները, իսկ լեզուն իր հերթին ձևավորում է մեր մտածելակերպն ու մշակույթը: Ուստի լեզվի և մշակույթի փոխազդեցությունն ու փոխկապվածությունը, միասնությունը փաստ է: Մի կողմից լեզուն արտացոլում է լեզվակրի մոտեցումները, համոզմունքները, աշխարհայացքը, մյուս կողմից՝ մշակույթը լեզվական արտահայտման անբաժանելի մասն է: Լեզուն նպաստում է մշակույթի պահպանմանը, իսկ մշակույթը՝ լեզվի:

Լեզվի և մշակույթի փոխհարաբերությունների գիտական ուսումնասիրության մոտեցումները կարծես թե շատ տեղին են օտար լեզվի ուսուցման համատեքստում, որոնք մարդուց պահանջում են հոգեբանության, քաղաքավարության, փիլիսոփայության, պատմության, մանկավարժության, մշակութային ուսումնասիրությունների:

Անհրաժեշտ է հաշվի առնել օտար լեզվի ազդեցությունը աշակերտի գիտակցության, աշխարհի առկա պատկերի վրա, համապատասխանաբար, ներգրավված է աշակերտի գիտակցության ոչ միայն լեզվական, այլ նաև ճանաչողական մակարդակը: Ակներև է, որ լեզուն ազգային-մշակութային տեղեկատվության, ինչպես նաև մշակույթի կրող է իր բոլոր դրսևորումներով: Լեզուն և մշակույթը անբաժան են, լեզուն մշակույթի կարևորագույն բաղադրիչն է, մշակույթը լեզվի պարտադիր բաղադրիչն է:

Այսպիսով, աշակերտների մշակութաբանական իրավասությունները առավել լիարժեք են ձևավորվում, երբ

- աշակերտը պետք է իր առջև դնի ուսումնական նպատակներ, որտեղ ուսուցիչը մեծ դեր է խաղում դասարանում հաջողության այնպիսի իրավիճակ ստեղծելու գործում, որը թույլ կտա ուսանողներին հասնել իրենց նպատակներին:
- աշակերտները կատարում են առաջադրանքներ, որոնք ունեն անհատական ունիվերսալ ուսումնական գործունեություն՝ անձնական, ճանաչողական, հաղորդակցական, կարգավորող

Ուսումնական գործընթացի ընթացքում իրականացվում է ուսուցչի հետ հավասար հաղորդակցական փոխգործակցություն:

Այսպիսով,

- ուսուցչի հիմնական խնդիրն է զարգացնել աշակերտի անհատականությունը սեփական գործունեության գործընթացում, որն ուղղված է որոնմանը, հետազոտմանը, գիտելիքների ձեռքբերմանը և դրանց հետագա գործնական կիրառմանը:
- Ուսուցիչը պետք է օգնի երեխաներին կողմնորոշվել ձեռք բերված գիտելիքներով և ուղղորդել դեպի նոր տեղեկատվության աղբյուրը, դրա օգտագործման հնարավորությունները, որպեսզի կարողանան կարևորել հիմնականը:
- Ուսուցիչը աշակերտին ուղղորդում է ճիշտ ուղղությամբ, հնարավորություն է տալիս ինքնուրույն մտածել և գործել, զարգացնել երեխայի անհատականությունը: Ուսուցիչը պետք է լինի շարժուն և բազմակողմանի, որը թույլ է տալիս նրան իրականացնել աշակերտակենտրոն մոտեցում, որն անքակտելիորեն կապված է օտար լեզու սովորելու հաղորդակցական, իրավասությունների վրա հիմնված և սոցիալ-մշակութային մոտեցումների հետ: Դասավանդման վերոնշյալ մոտեցումների կիրառումը, ուսուցչի և սովորողի համատեղ գործունեության ձևերն ու տեսակները նախատեսված են նոր սերնդի չափանիշներով:
- Ուսուցիչը, պետական կրթական ստանդարտի նոր պահանջներին համապատասխան դաս ստեղծելով, ակտիվորեն օգտագործում է ստեղծագործական զարգացումները, ժամանակակից տեխնոլոգիաները և հնարավորությունները՝ իր ողջ գործունեությունը կենտրոնացնելով ժամանակակից կրթական խնդիրների լուծման վրա:

## Օգտագործված գրականության ցանկ

- 1 Language And Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge  
Yerevan, "Lusakn" 2018
2. Գլուխ 8. Լեզվի յուրացման հոգելեզվաբանություն
3. <https://dna.ngo/hy/լեզու> -սովորելու- կարևորությունը/
4. Նազիկ Հարությունյան, Աստղիկ Երեմյան, Մանկավարժություն, «Մայրենի լեզվի դերը օտար լեզվի լեզվանյութի ընտրության և ուսուցման գործընթացում»
5. Андреевская-Левенстерн Л. С, Пурвина Т.С., Предупреждение ошибок в речи учащихся на уроке французского языка. Пособие для учителей французского языка, 75, М., 1978
6. Գալուշկին Օ. Յու., Ն. Է. Բաուման, «Լեզուն և նրա դերը հասարակության կյանքում»
7. Հռիփսիմե Նիկողոսյան, Բելլա Սարուխանյան, «Մշակութային իրազեկության դերը օտար լեզվի ուսուցման գործընթացում», ԵՊՀ, Երևան, 2015
8. Montgomery M., Raid-Thomas H. Language and Social Life, British Council, 1994
9. Kramersch C. Context and Culture in Language Teaching. Oxford: OUP 1993
10. Frank J. Raising Cultural Awareness in the English Language Classroom// Forum, N 4, 2013
11. Ուորթ Բ. Լ. 1956 Լեզուն, միտքը և իրականությունը: The M.I.T. Մամուլ, Massachussetts
12. Byran M and Sarries, V.E. 1989 Investigating Cultural Studies in Foreign Language Teaching

